Գավառի բնապահպանական տեղեկատվության
հասարակական Օրհուս կենտրոն

Public Environmental Information
Aarhus Center of Gavar

Հասցե. ՀՀ, 1201, ք. Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7
Հեռ. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
Էլ. փոստ blejanli@gmail.com

Address Central Square 7, Gavar, 1201, RA
Tel. +/ 374/ 77 76 46 41, +/ 374/ 264 6 15 11
E-mail blejanli@gmail.com

AA-005

15 մայիսի 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարար
պարոն Էրիկ Գրիգորյանին

Հարգելի պարոն Գրիգորյան

1998թ-ին Հայաստանի Հանրապետությունը բախտի բերմամբ թե պատահմամբ դարձավ այն 16-րդ երկիրը, որի կողմից վավերացումով էր պայմանավորված Օրհուսի Կոնվենցիայի իրավական ուժ ստանալը:
Արդեն 20 տարի է մեր երկիրը Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ բազմաթիվ քայլեր, գործողություններ է ձեռնարկել, այդ թվում ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ 15 Օրհուս կենտրոնների ստեղծելը, որի մասին մի քանի տարի շարունակ տարբեր նախարարներ միջազգային տարբեր հարթակներից զեկուցել և հպարտացել են: ԵԱՀԿ Երևանի գրասենյակի փակման հետ կապված կենտրոնների աշխատանքները դադարեցվել են, չնայած Օրհուս կենտրոններից շատերը գործում են, իսկ համակարգողներն աշխատում են հասարակական կարգով, սեփական միջոցներով պահելով կենտրոնը, մի քանիսն էլ աշխատում են տնից:: Կենտրոնների գործունեությունն այդքան էլ ակտիվ չեն, քանի որ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աշխատակցի կողմից կենտրոնների գույքը նվիրաբերվել է մարզպետարաններին և ՏԻՄ-րին, որը դժվարացրել է աշխատելը, կամ անհնարին դարձրել:
Ճիշտ է ԵԱՀԿ Երևանի գրասենյակը փակվել է, բայց ԵԱՀԿ Երևանի գրասենյակն այդ կենտրոններն ստեղծել էր աջակցելու ՀՀ կառավարությանն իրականացնելու Օրհուսի Կոնվենցիան մեր երկրում ու այդ կառույցի փակվելը չպետք է խոչնդոտեր այդ կենտրոնների աշխատանքին, ընդհակառակը, պետությունը պետք է այնքան կարևորեր նրանց գոյությունը, որ կենտրոնների պահպանման ուղղությամբ քայլեր ձեռնարկեր:
Մեր ունեցած տեղեկություններով, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի փակվելով, երկիրը չի հրաժարվել Օրհուսի Կոնվենցիայի Կողմ լինելուց շարունակում է աշխատանքներ տանել Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ:
Դրա հետ մեկտեղ ՀՀ Սահմանադրության 12 հոդվածի 1-ին կետով սահմանված է. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: 2-րդ կետով սահմանված է. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»:

Վերոնշյալը հաշվի առնելով, խնդրում եմ տեղեկացնել, թե ինչ գործողություններ են պլանավորվում նախարարության կողմից.

- Օրհուսի Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ,
- ՀՀ Սահմանադրության կատարման ուղղությամբ,

- Օրհուս կենտրոնների պահպանման և վերագործարկման ուղղությամբ (օրինակ Գավառի Օրհուս կենտրոնը փակվել է /գույքագրվել ու կապարակնքվել, որից հետո մարզպետարանն այդ սենյակն իր կարիքների համար է օգտագործում, Օրհուս կենտրոնի գույքն էլ հետը/ ՀՀ բնապահպանության նախարարի հասարակական կարգով խորհրդական Գալուստ Նանյանի միջնորդությամբ, ում գործողությունների օրինականությունը դեռ պարզել է պետք)։

Հարգելի պարոն նախարար,

Վերը նշվածի հետ միաժամանակ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել.
- 2017թ.-ի Օրհուսի Կոնվենցիայի ազգային զեկույցը
- 2016-2017թթ.-ի և 2018թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում երկրում Կոնվենցիայի ուղղությամբ կատարված գործողությունները
- Կոնվենցիայի իրականացման 2018թ.-ի գործողությունների պլանը
- Առաջիկա 5 տարիների Կոնվենցիայի իրականացման գործողությունների պլանը

Կանխավ շնորհակալ եմ

Հարգանքով՝

Լիաննա Ասոյան՝ Գավառի ՕԿ համակարգող

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg. Republic Sq. Yerevan. 0010. Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/07.1/50964
«24» «05» 2018 թ.

Գավառի Օրհուս կենտրոնի
համակարգող Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան 2018թ. մայիսի 15-ի Ձեր գրության, ներկայացնում եմ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի կատարման ընթացքի և դրա կիրարկմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգող Հայկանուշ Պարսամյանի 2017թ. հաշվետվությունը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝

Հ.Հովհաննիսյան

ՏՀՀԿՎ
Ա.Սուքիասյան
011 818 517

Տեղեկանք

ՄԱԿ-ի

ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելի ության, որոշումներընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցու թյան և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիա

2017թ. 1-ին կիսամյակ

Նախագծվել է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության,որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակ ցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի իրականացման 4-րդ ազգային զեկույցը, ինչը հանրային քննարկումների փուլում է:

- 2016 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունվել և 2017 թվականի փետրվարի 4-ին ուժի մեջ է մտել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է հասարակական կազմակերպությունների՝ իրենց շահառուների օրինական շահերը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում դատարանում ներկայացնելու հնարավորություն: 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել և 2017 թվականի փետրվարի 4-ին ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության օրենքը «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», որով օրենսգրքի 5-րդ բաժինը լրացվել է 29.3-րդ գլխով: Այդ գլխի 216.6-րդ «Հասարակական կազմակերպությունների կողմից հայց հարուցելը» հոդվածով ամրագրվել է հասարակական կազմակերպությունների՝ իրենց շահառուների օրինական շահերը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում դատարանում ներկայացնելու հնարավորությունը:
- Իրականացվել են մի շարք էկոկրթական միջոցառումներ, ներառյալ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ իրականացվող էկոլոգիական կրթության ծրագրի շրջանակներում իրականացվել են էկոդասընթացներ: Օրհուս կենտրոնների կողմից պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական միջոցառումներ՝ սեմինարներ, աշխատաժողովներ, որոնք նպաստել են էկոլոգիական կրթությանը և շրջակա միջավայրի հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը:
- ՀՀ փաստաբանների պալատի հետ քննարկվել են փաստաբանների համար վերապատրաստումներ և իրազեկման մջոցառումներ անցկացնելու վերաբերյալ հարցերը՝ Օրհուսի կոնվենցիայի շրջանակներում ընթացող գործընթացների և էական զարգացումների վերաբերյալ փաստաբաններին իրազեկելու, Կոնվենցիայի՝ արդարադատության մատչելիության վերաբերյալ դրույթների և ներպետական օրենսդրության զարգացումների վերաբերյալ քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել են արդարդատության մատչելիության խնդիրները:

ՀՀ բնապահպանական օրենսդրությունը կատարելագործվել է Օրհուսի կոնվենցիայի պահանջների իրականացման նպատակով:

2017 թվականի մարտի 9-ին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 357-Ն որոշումը՝ «ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», որի համաձայն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1325 որոշման հավելվածի 2-րդ՝ «Հանրային ծանուցման և քննարկումների ընթացակարգը» վերտառությամբ բաժնում երկարաձգվել են հանրային ծանուցումների և քննարկումների ժամկետները:

Ներկայումս նախագծման փուլում են գտնվում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները: Նախագծով առաջարկվել է Օրհուսի կոնվենցիային համապատասխանեցնել հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:

<u>ՄԱԿ-ի</u>

<u>ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիա</u>

<u>2017թ. 2-րդ կիսամյակ</u>

2017 թվականի սեպտեմբերի 11-ից 15-ը՝ Մոնտենեգրոյի Հանրապետության Բուդվա քաղաքում տեղի են ունեցել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետև՝ «Կոնվենցիա») կողմերի 6-րդ, դրա ներքո բարձրաստիճան հատվածի և «Աղտոտիչների արտանետումների և տեղափոխման ռեգիստրի մասին» ԱԱՏՌ արձանագրության 3-րդ հանդիպումները, որոնց մասնակցել է Կոնվենցիայի ազգային համակարգողը: Նա հայտնել է դիրքորոշում Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի պահանջների կատարման ուղղությամբ մշակված անհամապատասխանության թիվ VI/8a որոշման նախագծի (Draft decision VI/8a concerning compliance by Armenia with its obligations under the Convention, ECE/MP.PP/2017/20) որոշ դրույթների վերաբերյալ՝ մասնակցելով Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացի վերաբերյալ համապատասխանության մասին որոշումների նախագծերի քննարկումներին: Կոնվենցիայի կողմերի 6-րդ հանդիպման ժամանակ ընդունված թիվ VI/8a որոշումն ընդունվել է որպես Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայիով ստանձնած պարտավորությունների չկատարման վերաբերյալ 2014 թվականին երկրի վերաբերյալ ընդունված թիվ V/9a անհամապատասխանության

մասին որոշմանը հաջորդող փաստաթուղթ: Այն ամրագրել է առաջարկներ, որոնց կատարմամբ Հայաստանի Հանրապետության կողմից կիրականացվեն կոնվենցիայի այն պահանջները, որոնք համապատասխանության կոմիտեի կողմից գնահատվել են որպես կոնվենցիայի պահանջների չկատարումներ:
Օրհուսի կոնվենցիայի պահանջների արդյունավետ իրականացման նպատակներից ելնելով՝ 2017 թվականի հոկտեմբերին Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում կոնվենցիայի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքներ՝ սեմինարներ, քննարկումներ, աշխատաժողովներ են իրականացվել: Միջոցառումներն անցկացվել են կրթական հաստատությունների ուսանողների, դասախոսների, մարզերում աշխատող ընկերությունների աշխատողների շրջանում, համայնքային կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար:
ՀՀ փաստաբանների պալատի աջակցությամբ ՀՀ Սյունիքի մարզի (մասնավորապես, Սիսիան, Գորիս, Կապան, Քաջարան քաղաքների) և ՀՀ Տավուշի մարզի ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանների համար անցկացվել են սեմինար-վերապատրաստումներ, քննարկումներ՝ Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության հենասյան և հասարակական կազմակերպություններին վարչական դատարան բնապահպանական հարցերով հայցադիմումներ ներկայացնելու վերաբերյալ, ՀՀ օրենսդրության մեջ կատարված զարգացումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ շրջակա միջավայրի հետ կապված մարդու իրավունքներին վերաբերող մոդելային գործերի վերաբերյալ: Քննարկվել է արդարադատության մատչելիության խնդիրներով Հայաստանի Հանրապետության կողմից Օրհուսի կոնվենցիայի պահանջների կատարման ուղղությամբ 2017 թվականի սեպտեմբերին ընդունված անհամապատասխանության թիվ VI/8a որոշմամբ ամրագրված առաջարկների կատարման խնդիրներին՝ փաստաբաններին մասնակից դարձնելու հարցը: Փաստաբաններին ներկայացվել են անհամապատասխանության վերաբերյալ թիվ VI/8a որոշման 3-րդ կետի «c» ենթակետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատության մատչելիության խնդիրների վերաբերյալ, քննարկվել են այդ պահանջներն իրականացնելու նպատակով գործնական քայլեր ձեռնարկելու խնդիրները, ինչը կարևոր նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետության կողմից Կոնվենցիայի պահանջները կատարելու, բնապահպանական ժողովրդավարության արդյունավետ կայացման ուղղությամբ առաջընթացներ արձանագրելու համար: Քննարկվել է Օրհուսի կոնվենցիայի պահանջների կատարման ուղղությամբ ընդունված անհամապատասխանության թիվ VI/8a որոշմամբ ամրագրված առաջարկների կատարման խնդիրներին՝ փաստաբաններին մասնակից դարձնելու հարցը:
2017 թվականի դեկտեմբերին ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդին ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների 2014-2017թթ. կատարման խնդիրները և քննարկվել են առաջարկները:
Հասարակական կազմակերպությունների հետ, մասնավորապես, «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի, Երևանի Օրհուս կենտրոնի հետ 2017 թվականի հոկտեմբերի 6-7-ը կազմակերպվել է «Օրհուսի

կոնվենցիայի ճանաչում և կիրառում թեմայով» դասընթաց՝ դասախոսների, ուսանողների, ոլորտի հանրային ու մասնավոր հատվածի, ՀԿ-ների ներկայացուցիչների, լրագրողների, Օրհուս կենտրոնների համակարգողների համար: Այդ սեմինարի մի շարք մասնակիցներ, վերապատրաստվելուց հետո Հայաստանի մի շարք մարզերում իրականացրել են Օրհուսի կոնվենցիայի իրազեկման միջոցառումներ: Այնուհետև, 2017 թ. դեկտեմբերին կազմակերպվել է «Օրհուսի կոնվենցիայի իրականացման խնդիրները Հայաստանում» թեմայով կլոր սեղան:

Այս միջոցառումները «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի, Երևանի Օրհուս կենտրոնի կողմից իրականացվել են «Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի իրազեկության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ինչպես նաև Երևանի Օրհուսի կենտրոնի («Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կետնրոն» ՊՈԱԿ) աջակցությամբ մի շարք այլ սեմինարներ են կազմակերպվել, որոնք առնչվել են բնապահպանական ժողովրդավարության խնդիրներին և ներառել բնապահպանական որոշումների ընդունմանը, ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներին հասարակայնության մասնակցության խնդիրներին: 2017 թվականի հոկտեմբերին ՀՀ Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում Կոնվենցիայի հանրային իրազեկումների ժամանակ ներկայացվել են Մաաստրիխտյան նաև առաջարկները: